կը շարժի տեղէն, և երբ կը հասնին երկրորդ գիշերօթի տեղը, այլազգի խումբը՝ որ աղայի մի հրամանատարութեամբ՝ Հայոց հետ կ'երթար, համաձայն Կամենիցի փաշային կարգադրութեան, կը հրաժարի մերոնցմէ. այլ այդ հրաժարականը մեծագին կը լինի մերոց. զի 'ի նշան շնորհակալութեան՝ ոսկւոյ մեծ քսակ մի պարգև կու տան աղային. ապա թէ ոչ՝ այդ աղային պաշտպանութիւնն աւելի ծանրագնի կը լինէր նոցա։

Հայք իրենք իրենց մնալով՝ ազատ այլազգի պաշտպանէ, համարձակ կը լինին պաշտելու իրենց Տիրամայրը. գիշերները՝ խուլ և անմարդի ճանապարհէ դուրս տեղուանք կը զարնեն իրենց բանակը. իրենցմէ պահապաններ կը դնեն բանակին շորս պտոյտը. 'ի բանակամիջին՝ պարսիկ կապերտներով հովանաւորեալ սայլին վրայ է Տիրամօր Հրաշագործ պատկերն, պաշտպան պանդուխտ Հայերուն։ Փոխան հրաբորբոք ջահերու՝ փոքրիկ կանթեղ մի կը պըլպըլայ Պատկերին դիմաց, աղօտ լոյս ձգելով Տիրամօր թուխ դէմքին վրայ։ Այդ շարժական վրանաձև տաճարին մէջ, ամէն օր պաշտամունք կը կատարուին. թերևս և ոչ մի փառաւոր տաճարի մէջ այնպիսի ջերմաջերմ պաղատանօք չեն դիմած հաւատացեալք առ Աստուած. ինչպէս այս աղքատին խորանին դիմաց։ Երեկոյեան ժամասացութենէն վերջը վանազուրկ և տխրատեսիլ մայրապետք ծունր դրած պատկերին առաջ՝ իրենց առանձին մրմունջը կը հեղուին յունկն Տիրամօր. քաղցր էր նոցա համար այն Աստուածամօր առաջ Անկեալ դիրքը. Անկանիմք առաչի քոյ Աստուածածին, սրտաճմլիկ և խուլ ձայնով կը կրկնէին նոքա. չէր կրնար Հրաշագործ Տիրամայրն անլսող լինել